ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. սեպտեմբերի 8-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Ռուբեն Սինոյան	Կոմիտեի փոխնախագահ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **08.08.2022թ-ի «Շիրակ»-«Ուրարտու» (ՊԼ-008) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:**

1) Դաշտի տեր ակումբի հովանավորների կողային գովազդային վահանակների բացակայություն.

2) հովանավորների և գործընկերների ցանկը նախանշված ժամկետում չտրամադրելու հետևանքով մամուլի ասուլիսների և ֆլեշ հարցազրույցների ետնապատը (backdrop) ժամանակին չի տրամադրվել.

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաշվի առնելով 2022-2023թթ մրցաշրջանի սկիզբը՝ առավել մեղմ պատասխանատվության միջոցներ կիրառել.

1) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 47-րդ կետը՝ «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։
2) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 43-րդ կետը՝ «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

2. 20.08.2022թ-ի «Նոա»-«Ուրարտու» (ՊԼ-019) խաղը տեղի է ունեցել 15 բոպե ուշացումով «Նոա» թիմի ուշ ներկայանալու պատճառով։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նոա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով։

3. 04.09.2022թ-ի «Շիրակ-2»-«Արարատ-2» (ԱԽ-039) խաղի ժամանակահատվածում «Շիրակ-2» թիմի մարզիչ Անդրանիկ Բարիկյանի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ-2» թիմի մարզիչ Անդրանիկ Բարիկյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 19-րդ կետը՝ «Շիրակ-2» թիմի մարզիչ Անդրանիկ Բարիկյանին որակազրկել 2 խաղով և «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

Կոմիտեի նախագահ՝ _____

Կոմիտեի փոխնախագահ՝ _____

անդամներ՝